

նեստորեան ու կիրեղեան մարով եւ թէ ինչ է ըստ իրեան *μία φύσις σεσαρχωμένη*։ Սոյն գրքին կը յաջորդէ ոչ նուազ կարեւոր գլուխ մը *Nestorius et les hérésies christologiques* (էջ 203—217), որ կը շոշափէ մեծ հմուտութեամբ արիանոսաց, միարնայաց եւ ապողինար-ներու մոլորութիւնները եւ Պ. Սամստացոյ վարդապետութիւնը։

Կեստորական ու եւտիքեան բարդ ու անորոշ խնդիրներու անել բաւոյն անմուշոր ընթանալու համար անհրաժեշտ հարկաւոր է աչքի առնել ունենալ ժ.ի.ժ.ի սքանչելի ուսումնասիրութիւնը։ Մենք կը յանձնարարենք նոյնը մասնաւորապէս մերինեուն։

Հ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ԱՅԻՆԻ ԱՅԻՐ

Ա.

Պաշատուր Արովան։

Վաղուց հետապնդելով մի խնդրի, որ կապ ունի նաեւ արեւելահայ գրականութեան Մոգի-կանի հետ, չէինք գտնում բաւականաչափ լուսաբանութիւն եւ մինչեւ այսօր էլ չենք գտած. ուստի խնդիրը մնում է մեզ համար բաց եւ կարօտ անգրագոյն հետապնդման։ Սակայն ներկայիս իբրեւ զկուսման շանդէսի ընթերցողների համար հետաքրքրութիւնից բոլորովին զուրկ կարող է չը լինել հետեւեալ գրութիւնը, որը ի պատասխան Վարաբաղի Թեմական Դպրա-նոցի Տեսչի՝ մեր մշակած հարցերի համաձայն պաշտօնական դիմումի, ստացուել է Դորպատ-Իւրեւի համալսարանի տեսչից։

Պ. Ժ. Լ. Կայսերական Իւրեւի համալսարան. վերստեւուց. 10 գեկտեմբերի 1912 թ. Թ. 7855, + Իւրեւ, 1 ՓՅԼ. Նորին Գեղամեծաբութեան Հ. Վերասեսչին Վարաբաղի Հայոց Հոգեւոր Սեմինարիայի, Ի հետեւումն այն ամի Նոյեմբերի 16ից Գրութեանց Թիւ 65, պատու ունեմ հաղորդելու Ձերդ Գեղամեծարութեան, որ Կայսերական Իւրեւի համալսարանի (Նախկին Դորպատի) ուսանողների ցուցակներում ընդ-հանրապէս չի հանդիպում խաչատուր Արովանցի անունը։

Համալսարանի արխիւում կատարուած պրպտումների համաձայն, երեւաց, որ միայն

1861 եւ 1862 թ. այստեղ ուսանող է եղել քաղաքատնտեսութեան մասնաճիւղում հայագիւր Վարդան Խրիստափորովիչ Արովանը, թերեւս խաչատուր Արովանցի ազգականը, որ ծնած է Թիֆլիզում 1843 թուին, եւ պետական պաշտօնայի զաւակ է։ Այդ Արովանը չի աւարտել դասընթացքը համալսարանում, բայց 1864 թ. քննութիւն է տուել համալսարան-նում եւ ուսաց լիցիւր ուսուցչութեան իրաւունք է ստացել եւ յետոյ 1890 թ. Երեւանի Հոգեւոր Սեմինարիայում ուսուցիչ է եղել։

1834 թ. արտաքուստ 18 ուսանողների, Դորպատի Բուրչեշաֆտի անդամների, ցուցա-կում չի հանդիպում ոչ Արովանցի եւ ոչ Արովանի անունը վերատեսուչ (անընթեռնելի, քարտուղար ուսանողական գործերի (անընթեռնելի)։

Այս գրութեան տոնթը եղել է՝ ինչպէս ստացինք, Վարաբաղի թեմական Դպրանոցի Տեսչի խնդիրը հետեւեալ բովանդակութեամբ. «Վերատեսուչ Վարաբաղի Հայոց Հոգեւոր Սեմինարիայի Թ. 65, 1912 թ. Նոյեմբեր 16, + Հր. չի Նորին Մեծապատուութեան Իւրեւի, Նախկին Դորպատի, Կայսերական համալսարանի վերասեսչին Հայոց գրողները իրենց պատմական հետազօտութիւնների ժամանակ վերաբերմամբ նորագոյն գրականութեան, որի Նախկարապետներից մէկն է Ձեր *alma mater*ի սանը՝ խաչատուր Արովանը, վերջնայս կենսագրու-թեան մէջ նրա ուսանողական կենսոյի շրջանը լուրջեամբ են անցնում, չունենալով իրենց ձեռքին տուող տեղեկութիւններ։ Արդ՝ Նկատի ունենալով որ ներկայումս մեր պատմասէրներից մէկը յարուցել է այդ պակասը լրացնելու հարցը, հնարուր չէք գտնել արդեօք կարգադրել, Արխիւից հանել եւ հաղորդել հետեւեալ տեղեկութիւնները Հուշոց Հոգեւոր Սեմինարիայի վերատեսչի անունով. 1. Յիշուում է արդեօք խաչատուր Արովանի անունը այն 17 ուսա-նողների՝ Դորպատի Բուրչեշաֆտի՝ թուում, որոնք 1834 թ. 12 փետրուարի համալսարանից արտաքուստեցին եւ եւթարկուցին ոստիկանական խտտագոյն հսկողութեան, իսկ նրանցից երեքին մերժուց ընդունել պետական ծառայութեան մէջ, ինչպէս եւ յետոյ 1835 թ. յունիսին ներուցին բոլորը եւ թոյլատրութիւն ստացան իրենց ընթացքն աւարտել ուսական որեւէ համալսարանում, բացի դորպատեանից։ 2. Ո՞ր թուին է մտել խաչատուր Արովանը համալսարան. ուսումնասիրել է արդեօք որեւէ մաս-

նաճիւղ: 3. Դասընթացքն աւարտել է արդեօք, եւ եթէ աւարտել է՝ երբ է վկայական ստացել եւ որպիսի՝ Համարով, իսկ եթէ Համայնարանը թողել է ինչու: 4. Ինչով է վերջացել Сѣверная Пѣла լրացրի խմբագիր Булгаринъ-ի գործը խաչատուր Արքովանի Հետ, 1835 թ. (ամիս եւ թիւ) Մօքը վերատեսչի քննութիւնից յետոյ: Գպարանցի վերատեսչութ. Եւրամիշան, Քարտուղար Ա. Տէր-Միքայիլան:

Երկու թուղթն էլ գրուած են ռուսերէն լեզուով, թարգմանութիւնը մերն է:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, այս Հարցերով պիտի սպառուէին բոլոր տարակոյնները, սակայն Խորեհի վերատեսչի գրութիւնը Հարցը չի սպառում, այլ նոր Հարց է ստեղծում, եւ արդարեւ եթէ Արքովանը նոյն իսկ իւր որդու վարդանի ուսուցչական իրաւունքն էլ չի հասել Դորպատում, եւ Համալսարանի Հետ ոչ մի առնչութիւն չունի նրա անունը, այն ժամանակ ի՜նչպէս հասկնալ բժշկ. Լ. Տիգրանին, Տ. Տէր-Կարապետեանին, իրան նոյն իսկ խաչատուր Արքովանին՝ յիշատակարանով միասին:

Առ այսմ այդքան Լեւոնն ուրիշ անգամ, Բայը Կ'ուզէի, որ "Հանդէսն" իր Հեղինակուոր ձայնը բարձրացնէր խաչատուր Արքովանի բոլոր իրերն ու թղթերը, ձեռագրերն ու նիւթերը կոտսոց ազատելու օգտին կամ Թիֆլիզի Գրողների ընկերութեան միջոցով կամ որեւէ ուրիշ կերպ. իսկ նրանց Հրատարակութեան Համար, եթէ անհնար է խնամուտ Հետաքրքրութեամբ ուրոյն Հաստոր ստեղծել, բանալ "Հանդէսի" մէջ յատուկ բաժին եւ այդ մասին հրաւեր կարդալ ամեն անգ եւ ամենքին:

Բ.

Սուրբ Լազարի Պապիրը եւ Մովսիսն:

Այս երկու իրերի մասին անձիշդ տեղեկութիւններ են սպրտած վեհնախկնց Հրատարակած "Միտիարեան Թոքեխան, ին մէջ, Ա. Հատոր, էջ 192—194: Կրթաց լուսարանութիւնը Հետաքրքրի կարեւորութիւն կարող է ունենալ նոյն իսկ վեհնախկնան Հայրերի Համար, եթէ ոչ միտեան մարմարոնի, գէթ նուազագոյն չափով:

Այնտեղ հաղորդել են Միտիարեան Հայրերը, որ Հնդկական ձեռագիրը, պապիրի թերթերու վրայ, Գ. Պողոս Լազարովիչը 1830ին գտնելով Մարտարս մէջնէի մը մէջ, ընծայիր է Միտարեանութեան 1834ին:

Սիւալ է այդ թուականը. Միտիարեան Հայրերի մատենադարանում Պապիրը գտնուում էր 1833 թ. եւ գիւտին պատմութիւնը տարբեր է: Եւ ահա էս է ինչպէս. 1833 թ. երբ սպուում էր Հայ-խաչարեանն բառագիրք եւ Պուտարբոսը, Մատենադարանի կառավարին էր Հ. Ռափայէլ Թորանց, որ յայտնի է մի քանի Հեղինակութիւններով, ինչպէս են ճառք եւ ներբողներ, Տրամաբանութիւն Տրոյիդի, Մարդավարութիւն եւ Ժամանակագրութեան տարերք: Այցելուների վրայ նա թողնում էր խիստ նպաստաւոր տպագրութիւն. Հափազանց ընդել եւ բարեկամ քաղաքավարութեամբ նա բացատրում էր մատենադարանի իրերը, որոնք եւս առանել այցելուին թուում էին գեաշատելի, նա պատմում էր, որ Պապիրը Արեւելեան Հեղինականից մի Հայ միսիներ է բերել. Ռանգունը վերցնելու ժամանակ պապիրը գտել է մի անգղիացի զինուոր եւ վաճառել է Հային: Այս բոլորը մենք քաղում ենք С. Петербургскія Вѣдомости 1833, Թիւ 274 եւ 275 յոգուածների արտասպութիւնից, որ պատահել է մեզ Собрание актовъ относящихся къ обобщенію исторіи армянскаго народа, п. III. стр. 151—153 երևում է ուրեմն, որ 1833ին եւ ոչ թէ 1834ին՝ ինչպէս գրուած է "Միտիւ. Թորեւ.", ի մէջ, պապիրը գտնուում էր արդէն Ս. Ղաջարում: Իսկ թէ երբ էր նուիրած՝ այնտեղ ասած չէ: Նոյն անգը Մուսիայի Համար Միտիարեան Հայրերը գրում են, որ նուիրողն է "Հայկազն Եռուսէֆ պէյ, Եգիպտոսի Ալի փաշայ փոխարքայի առաջին պաշտօնեան", որին С. Петербургскія Вѣдомости լրագիրն անուանում է Босвихи. Այս թիրիմացութիւնը երեւի Հեռանալ է այն բանի, որ մուսիան նուիրել է ոչ թէ "Հայկազն Եռուսէֆ պէյ", այլ Պողոս պէյ Եռուսէֆ, որ է ինքն Պողոս-պէյ Չելեբի. Թովսեփեան. Սոյն Պողոս կարող էր ի հարկէ Босвихи դառնալ (Համա. "Բազմապէս" 1844, էջ 90, "Պատմ. Հայ լրագրութեան", Հ. Գր. Ա. Կալէմբարեանի, էջ 64 եւ Յիշատակարան 1512—1912, Հատ. Բ. Պոլիս 1911, Ա. Գ. Զարդարեան, էջ 299—302):

ԳՐ. ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

